


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՈՒԳՐԻ
Պազար Մուրուր, ԳԱՅԻՐԷ

Directie du journal PAROS
Bazar Mou, sur, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրի կամար տեղին. որ 9 դ. 80
» վեցամսեայ » 50
Օս.ար երկիրներ տարեկան Թրակ 25
» » վեցամսեայ » 14
Թղթաւարի ծախքը կամքագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ՀԱՅՏՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Եթէ անտկնկալ միջադէպ մը չի գայ խան-
գարել լաւատես տրամադրութիւնները որոնք
կ'արտայայտուին ամեն կողմէ, հաւանական է
որ Թուրքիոյ և Յունաստանի միջեւ հաշտու-
թեան հիմնական պայմանները կ'ընտրուին այսօր
ի. Կ. Պոլիս: Յունաստան մեծ շունչ մը պիտի
առնէ ատով, վերջնապէս գիտնալով իր կա-
ցութիւնը, և ազատելով պատերազմի վերջա-
կըսման երկիւղներէն ու տենդոս պատրաս-
տութիւններէն որոնք կը հիւժէին, կը սպա-
ռէին զինքը:

Գերմանիոյ կայսեր կողմէ Սուլթանին ուղ-
ղուած հեռագիրն որ փափագ կը յայտնէր
Թեսաղիան յոյներուն ձգելու, անշուշտ իր
ազդեցութիւնն ունեցաւ բանակցութեանց
դիւրացման վրայ, և այդ կենսական հարցին
մէջտեղէն վերնալով, դեսպաններուն բա-
նակցութիւնները կրնան այլ եւս ելքի մը
յանգիլ:

Խնդրոյ առարկայ եղած կէտերն երեք
էին, ինչպէս յայտնի է, նոր սահմանագլխի
ճշդում, հիւպատոսական դաշնադրերու (ֆա-
րիդիալախոն) փոփոխում և պատերազմական
տուգանքի քանակութեան որոշում:

Առաջին կէտին վրայ սապէս կը համա-
ձայնին. Թուրքիա պիտի հրաժարի ամբողջ
Թեսաղիան պահանջելէ. սահմանագլխի ռազ-
մագիտական փոփոխում մը միայն պիտի կա-
տարուի, որու հետեւանքով յունական հողէն
պզտիկ մաս մը պիտի անցնի օսմանեան հո-
ղին, այն է Լիդարիա կամ Նէղէրոս: Դես-
պանատանց զինուորական կցորդներուն կող-
մէ առաջարկուած է այս պայման որուն չեն
ընդգդիմանար ո՛չ Դուռը և ո՛չ հելլէն դահլիճը:

Գաւթիդիալախոններու խնդիրը ամենէն
կենդանուն էր և միջադէպին տեսակէտով բա-
ցառիկ կալ չ'ուրութիւն ունէր: Թուրքիոյ նախ-
նական պահանջումներուն առջեւ տեղի տա-
լով, Յունաստան պիտի կորսնցնէ իր հողերէն
ու միլիոններէն աւելի մեծ բան մը, իր հը-
պատակներուն եւրոպական հպատակներու
հաւասար վայելած ազատութիւնը: Այս հողն
ալ իրենց վրայ առին զ'եսպանատանց թարգ-
մանները և կը յայտարարեն թէ կատարելի
փոփոխութիւնները երկրորդական կէտերու
և ձեւակերպութեանց միայն կը վերաբերին.
սկզբունքի տեսակէտով և հիմնական կէտերու

մէջ՝ Յունաստանի գաւթիդիալախոնները պիտի
մնան նոյն սահմանին մէջ ուր կը պահուին
միւս Տէրութեանց հիւպատոսական իրաւա-
տութիւնները:

Պատերազմական տուգանքը ինչո՞ւնեցաւ
եօթանասուն միլիոն ֆրանքի, չորս տարուան
մէջ վճարելի. այս գումարն իսկ շատ ծանր է
հելլենական պիւտոճէին համար որուն բացը,
ներկայ տարուոյ մէջ, 110 միլիոն կը հաշուէ:
Ուսկի՞ց պիտի ճարէ Յունաստան այս միլիոն-
ները. այս անել կացութեան առջեւ ալ, բա-
րեացակամ տրամադրութիւն մը կը ցուցունեն
Տէրութիւնները. Թեսաղիոյ մէջ թուրք զին-
ւորներուն պատճառած նիւթական փաս-
տերուն գումարը ճշդութեամբ յանձնախումբի
մը կողմէ, պիտի վեղչուի եօթանասուն միլիո-
նէն որ այս կերպով կ'ընայ աննշան քանակու-
թեան մը:

Ահա հաշտութեան կրքման համար ուր-
ուագծուած համաձայնութեան ու զիջողու-
թեան պայմանները զորս բերաւ եւրոպական
վերջին Սուրհանդակը և որոնք, հեռագրաց
խօսքին նայելով, պիտի կրքուին այսօր Թուր-
հանէի դեսպանական գումարման մէջ:

Յոռետեսներ չ'են պակսիր, — և ա-
նիրաւ չեն յոռետես ըլլալով — շատ հաւատ
չընծայելու համար այս աւետարներ Սուրհան-
դակին, առարկելով թէ Թուրքիա այսքան
դիւրաւ չի հրաժարիր իր ծայրայեղ պահան-
ջումներէն, թէ բռնութեան առջեւ միայն տե-
ղի կուտայ և եթէ Եւրոպա տրամադիր ըլլար
բռնութիւն բանեցունելու, վերջին տարիներու
աղէտներէն ո՛չ մէկը չէր պատահեր:

Երանի՜ թէ իրաւ պատրաստ մը չ'ըլլային
Յունաստանի և իր բարեկամներուն տաժած
յոյսերը. այդ պարագային մէջ, պատմական
այս մեծ ազդը՝ զոր ժամանակակից դիւա-
նագիտութեան մեքենայութիւններն ու հա-
կառակութիւնները պզտիկցունել փորձեցին՝
կրնայ նորէն ինքնամիտման ու հայրենասի-
րութեան լուրջ մոտածումներով ու մեղուաշան
գործունէութիւնով մը ժամանակին հետ դար-
մանել իր աղէտները. ընկճուած ու հարստա-
հարուած աղղերուն, անպաշտպան ու դժբաղդ
ժողովուրդներուն համար փրկութիւնը այս իմաս-
տութեան մէջ կը կայանայ. յուսահատութիւ-
նը պիտի գահավիժէր ասոնց կորուստը:

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

Հայ դերասանական խումբը վերջա-
պէս յաջողեցաւ Դահլիճէն Ադիսաբեդիա
երթալ: Սովորաբար երեք-չորս ժամէն կա-
սարունոյ այդ ճամբորդութիւնը՝ մեր դերա-
սանները երեք-չորս շաբաթէն հազիւ կասա-
րեցին. այս յետաձգումը դանդաղութեան
յեւթ վերագրեմ, այլ իրենց ճակատագրին.
դերասանութիւնն ալ, մեր ընկերային կարգ
մը երեւոյթներուն պէս, իր ամենէն անկեալ
վիճակին մէջ կը գտնուի հիմնակ: Ասեցմէ
շատեր, որոնք բեմական այնքան փայլուն
շրջաններ անցուցած են, հետաքրքրութիւն
ազդելու տեղ՝ կարեկցութիւն միայն կը շար-
ժեն այլ եւս. ինչ որ կը մնայ իրենց անց-
եալ համբաւէն ու արուեստէն՝ նաւաբեկու-
թենէ ազատածներու պէս մեկեղ բերած,
այդ բեկորներով կազմած են խումբ մը,
որ դերասանական ըրջաշուն համար գաղ-
թական ըրջաշէ չի դադրիր:

Այս անգամ, ու գարնան սկիզբը, իրենց
բոլոր ուժերը ժողովեցին՝ գոհ ընելու հա-
մար Դահլիճի հասարակութիւնը, յանձն առ-
նելով իրենց դժգոհ մնալ. անկեղծապէս
խօսելով, երկու կողմէն ալ խոսապահանջ
յեթին. բեմին ու քաւեստարահին մէջ ներ-
դաշնակութիւն կար միշտ, ներդաշնակութիւն
բառին է՛ն ճիստ իմաստովը, — բացի խի-
վական Օքերային մէջ տրուած ֆանի մը ներ-
կայացումներէ որոնք հայ դերասանութեան
երթեմի շէնք երեւոյթներու հեռապակերը
կը կենդանացունէին:

Մեծ յաւակնութիւններով չեն փոխադ-
րուիր Ադիսաբեդիա, իսկ մեծ ակնկալու-
թիւններով, որոնց կէսն ալ եթէ իրականա-
նայ՝ միշտ յաջողութիւն մըն է իրենց հա-
մար, եւ յաջողութենէ աւելի բան մը, չը-
սելու համար ուրիշ բան, վասն զի երկու
ամսուան մօտ է որ անգործ կը մնային հոս:
Ադիսաբեդիայիցիներն ունին իրենց հոյա-
կապ քաւեստը ու երոպական յաւագոյն
խումբերը. իսկ պիտի յիշեն անշուշտ պըզ-
սիկ բեմի մը վրայ երեւնալու կոյուած այս
պզտիկ խումբը որ մերն է. անեղի կըրջար
գործածել «ֆալսետում», բառը որ սկսնակ-
ներուն յատուկ է. բեմական կեանքի մէջ
ծերացածներուն համար չեն գիտեր ի՛նչ
քաւեստութիւն գործածել: Ադիսաբեդիոյ
ազգայիները՝ իրենց գործնական ըմբռնու-
մով ու ազնիւ զգացումներով, այս մօտ
հրաւեր մը մեզմէ ընելու պէտք չունին:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ի Կ. ՊՈԼԻՍ

Երէկ Հալասի հեռագիր մը հետեւեալ անակնկալ լուրն հաղորդեց որ զանազան մեկ-նութիւններու առիթ կուտայ տեղական մա-մուլին մէջ. ընդհանրապէս հաւատ չընծայ-ուիր անոր :

Կ. ՊՈԼԻՍ, 24 յունիս. — Կը հաւաստեն թէ Սուլթանը որոշեր է հաշտութիւն կնքել Յունաստանի հետ և թէ ի հարկին, պիտի վերակազմէ արդի նախարարութիւնը, եթէ այս վերջինը մերժէ համակերպիլ : Մինչեւ իսկ իր նախկին քարտուղարներէն մէկը Եգիպտոս ղըր-կաժ է եղեր խնդրելու համար Ռիազ փա-շայէն (նախորդ նախարարապետը) որ ընդու-նի Մեծ-Եպարքոսութեան պաշտօնը :

ՀԵՂԵՍՏԱՆ

Մանր մունր շիտթութեան լուրեր կը հասնին Պոմպէէն : Ռիւզէր կը հեռագրէ հինգաթիի թուականով .

«Հրացանի հարուածներ պարպուեցան առողջապահական երկու պաշտօնեաներու վը-րայ որոնք ժանտախտին դէմ հսկողութիւն կընէին : Անոնցմէ մէկը մեռաւ : Կը կարծուի թէ այս սպանութիւն առնջութիւն ունի խոռ-վարարական պզտիկ թերթի մը հետ որ վեր-ջերս չըլարեցրութեան հանուած էր .»

Իսկ Հալաս, նոյն օրուան թուականով, կը հաղորդէ .

ՊՈՄՊԷ, 24 յունիս. — Յայտարարութիւններ փակցուեցան քաղաքին մէջ՝ Թագուհոյն յո-բէյեանին և անգլիական տիրապետութեան դէմ :

ԻՌԱՆՏԱՆ

Իռանտագինները հանդարտ չի մնացին Թագուհոյն յորէյեանին առթիւ և ցոյցերով արտայայտեցին իրենց դժգոհութիւնը, ինչպէս խորհրդարանին մէջ բողոքած էին իրենց ե-րեսփոխանին ընդմէջ : Աւասիկ այս առթիւ հասած հեռագրերը ,

ՏԸՊԼԻՆ, 23 յունիս. — Սեւ գոշակ մը քաշուեցաւ քաղաքապետական պաշտօնատան վրայ : Յուցարարները փողոցները շրջեցան՝ դադաղ մը պտտուելով որուն վրայ գրուած էր «Անգլիական կայսրութիւն» : Ոստիկանու-թիւնը ի զուր փորձեց բազմութիւնը ցրուել :

ՏԸՊԼԻՆ, 24 յունիս. — Խռովութիւն-ները կրկնուեցան այսօր : Ոստիկանութիւնը քանիցս կրակ ըրաւ ժողովուրդին վրայ և բազ-մաթիւ ձերբակալութիւններ կատարեց :

ԱՐԱՊԻ ՓԱՇԱ

Անգլիոյ Խորհրդարանի յունիս 17ի նիս-տին մէջ երեսփոխան Պ. Լոսըն հարցուց արտաքին գործոց նախարար Պ. Բըրքլենին թէ չէ՞ր կրնար յանձնարարել որ Թագուհին իր յորէյեանին առթիւ ազատ արձակել տայ Արապի փաշան ու անոր ընկերները որոնք 15 տարիէ ի վեր աքսորուած կը մնան : Պ. Բըր-քլեն կրկնեց նոյն մերժողական պատասխանը զոր տուած էր արդէն փետրուար 8ի նիստին մէջ, այս մտօք եղած առաջարկի մը ի պա-տասխան :

Այս առտու Լոնտոնէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ Թագուհոյն յորէյեանին առ-թիւ՝ Կալլէսի իշխանուհոյն նախաձեռնու-թեամբ սեղան տրուեր է 310,000 աղքատաց :

ԱՂՏՈՏ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Փառոս իր անցեալ շաբթուան մէկ խըմ-բադրականով որբերու խնդիրը կը յուզէ իր կարգին և յորդոր կը կարգայ Եգիպտոսի հայերուն որ անմասն չ'մնան այս ազգային բարեգործութենէն : Շատոնց է որ Պոլսոյ մեր թերթերը կարգալով՝ կուզէի ես ալ քանի մը խօսք ընել այդ որբերու խնդրին վրայ և դո՛հ եմ որ առիթը կը ներկայանայ :

Փառոս կ'առաջարկէ կա՛մ հանգանա-կութիւն մը բանալ ու դրամը հասցնել ապա-հով ձեռքերու, այդ տարաբախդ մանուկնե-րուն յափկացունելու համար, կա՛մ քսան-ե-րեսուն որբ ուղել Պատրիարքարանէն՝ Գահի-րէի ու Ալեքսանդրիայի բարեկեցիկ ընտանիք-ներու խնամքին յանձնելու համար՝ իբրեւ որդեգիր :

Ինձի համար, որբերու օգնելու միակ և միակ միջոց մը կայ . այն է Փառոսին առաջին առաջարկութիւնը՝ հանգանակութիւն : Ազգա-յին ընդհանուր հանգանակութիւն մը պէտք է ընել և հաւաքուած դրամով, Պատրիար-քարանի հսկողութեան տակ, որբանոց մը կամ եթէ կարելի է որբանոցներ հաստատել և անոնց մէջ խնամել ազգին որբերը : Իսկ որդեգրելու դրութիւնը ամենէն կասկածելի, ամենէն կեղծաւոր, ամենէն աղտոտ գործն է որ կը կատարուի, բարեգործութեան դիմակին տակ : Որդեգրութիւն չէ, այլ կատարեալ գերիի առուտուր մըն է որ տեղի կ'ունենայ :

Ուշագրութեամբ կարգայի բոլոր այն նամակները որոնցով որբեր կուզէին՝ որդե-գրելու համար : Ամենքն ալ մութ, շիւ ու անվստահելի երեւցան ինձի :

Հարկւարուր մարդիկ մինչեւ հիմա փա-փաք յայտնեցին տղայ մը որդեգրելու և սա-կայն գրեթէ ամենքն ալ ութը տասը տարե-կանէն վեր տղաք պահանջեցին : Ինչու՞ համար : Ի՞նչ վստահութիւն ունինք թէ ձրի ծառայ կամ աղախին չէ փնտռածին : Ո՞վ պիտի վկայէ իրենց մասին . քահանա՞ն : Բայց ո՞վ կը համարձակի վկայել քահանայի մը պար-կեշտութեան : Աւանդական ժամանակներէն ասդին չէնք շնորհք քահանայ մը ունեցա՞ծ ենք երբեք :

Մին ութը տարեկան աղջիկ մը կուզէ, միւսը տասը տարեկան մանչ մը և Պատրիար-քարանը պիտի զրկէ ատոնք՝ օրհնութեան թղթով մը առ որդեգրողը : Սակայն գիտէ՞ որ առաջինը անբարոյական կամ հեշտասէր մէկը չէ և երկրորդը անխոստովանելի միւլու-թիւններ չ'ունի . ըսածս չափազանցութիւն չի համարուի Դիտցուած ճշմարտութիւն մըն է թէ ընդհանրապէս ամեն ազգի մէջ նուազ բարո-յական ունեցողներն են որ ամենէն շատ որ-դեգիր ունին :

Ի՞նչ ապահովութիւն ունինք որ որդե-գրողը չ'իմիջի իր չէ, իր տունը թողալու տի բոյն մը չէ : Նորէն քահանա՞ն պիտի վը-կայէ :

Պատրիարքարանը այս խնդրին մէջ ա-մենէն դատապարտելի բանն է որ կ'ընէ ու-րբերու մասին, անգիտակցաբար գործիք ըլլալով կարգ մը կասկածելի, կեղտոտ, անխիղճ քա-րեզործներու որոնք կա՛մ շահագործութեան

համար, կա՛մ կարգ մը անխոստովանելի ա-րարքներու համար, մէջտեղ նետուած են որբեր կորզելու և այսպէսով իրենց ալքաժին մը հան-ելու ջարդերէն ու ընդհանուր կողոպուտէն :

Ճշմարիտ բարեգործներու կ'իյնայ վերջ մը տալ այս գայթակղութեան : Ըստ իս, ինչ-պէս ըսի, միակ միջոցն է ընդհանուր հան-գանակութեամբ մեծկակ դուժար մը հաւա-քելով որբերը ժողովել և ամէնքը միասին խը-նամել ուղղակի Պատրիարքարանէն հաստատ-ուած յատուկ մանձնախմբի մը հսկողութեան տակ : Կարելի է նաեւ զանազան որբանոց-ներու մէջ տեղադրել զանոնք, ազգային կամ օտար, ինչպէս այդէն շատերու համար և-ղած է : Վերջապէս որբերը պէտք է հաւա-քաբար խնամել և ո՛չ թէ անձանաչ անհատ-ներու վստահիլ զանոնք :

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

ԻՆՉՈՒ ԶԱՏՈՒԵՑԱՆՔ

(Ֆ Ա Ն Թ Է Զ Ի)

Եթէ դուր ալ պատճառը խանար, ապահովեմ որ իրաւունք պիտի տար ինձի :

Գուցէ շատեր ինձ համար ըսեն թէ զազան մը, գինեմը մը, դատարկապորտ մըն եմ : Գրոցյինեա պի-տի երգնուն թէ առտու իրիկուն կինս կը ծեծէի և խեղճ արիւն արցունք կը թափէր :

Մերկ կը պտըտէր, պիտի աւելցնէն, ասորոյ ժարմոյն մըս չարչարանի կատարող նշաններ կե-րեւան, թոքախտ կը տառապի, կը հոգսոյ, կը թըր-նէ, մահաւերձ է, պիտի մեռնի :

Եւ շատ չպիտի դորմանամ, եթէ օր մ'ալ լուր մը տարածուի թէ կինս սպաննել փորձած եմ, մի մի-այն իր տղիքներէն նախկինս մաքրուն մը հանելու հաճոյքին համար . . . հաճոյք մը՝ որ շատ շատ փոքր Ասիոյ մէջ միւսիկապարճի մը կամ գայմազամ մը կըր-նայ նախքան ինքզինքին :

Եւ սակայն չէր գիտեր թէ որբա՞ն հեռու են ճշմարտութիւնը գիտնալ . խղճմտանքս միշտ հան-դարտ եղած է կարգուած օրէս մինչեւ այսօր :

Ամենէն լայն ազատութիւնը տուած էի իրեն . ուզած ժամանակը դուրս կ'ելլէր, ուղածին պէս կը հագուէր և ուղածին հետ կը տեսնուէր :

Օրերով բողոքայ կը գտնուէր տունէն՝ տառա-կելով թէ մօրաքոյրը կամ հօրաքոյրը հիւանդ են և անոնց սնարին բով գտնուելու էր :

Բայց այս ամենը նշանակութիւն չունէին ինձ համար : Անսահման հաւատք ունէի իր հաւատարմու-թեանը վրայ : Նիւնի, այս է կնոջս անունը, գեղեցիկ էր, սրտիս, հիւանդի կերպով դաշնակ կը զարնէր և սքանչելի կերպով կերգէր :

Անոր մէկ տխրալի կը գիւթէր զիս և մէկ ժը-պիտը արքայութեան զունքը կը բանար առջիս :

Եւ այսպէս կ'երթայինք կոր, սովայն եկաւ օր մը որ . . . :

Կիրակի մը — Երեգեցի պիտի երթամ, բաւա ձեռ-նոցին վերջին կոճակը գնելով : — Ինձ համար ալ ա-գօթի, պատասխանեցի և մեկնեցու :

Միջոց մը չեմ գիտեր ի՞նչ բան փնտռելու հա-մար Նիւնիի մէկ երկու գարանները խառնել հարկ եղաւ :

Տանթկներու, ժապուէներու, արհեստական ծաղիկներու, պալէնայի կտորներու, մապի գնդաւեղ-ներու, կոճակներու և հազար տեսակ ժանր մունր ա-ռարկաներու խառնաշփոթութեան մը մէջ կոյտ մը նստակի թղթեր աչքիս զարկին :

« Կնոջ մը նամակները էրիկը կրնայ կարգաւ ըլլին, ալ չեմ յիշեր որ խորհրդարանին մէջ : Հետեւաբար սկսայ թղթաւեղ կնոջս անուշաբոյր նամակները :

Ամենքն ալ իր ձեռագրերն էին, խառնաշփոթ կերպով գրուած :

Կ'երեւայ թէ իր նամակներուն ստուերազրերն էին :

Չէի սխալած : Թուականներէն հասկցայ թէ ամսուան մը թըր-թակցութիւններն էին իրենցին հետ փոխանակուած :

Աչքը բաց, վարպետորդի, աշխատասէր, շահա-
ղէտ, ահա՛ Պառնաթօյի յատկութիւնները : 1896ին
ինքզինքը Եւրոպայի ծանօթացնել ուզեց և եկաւ
Բարիդ :

Ձեռքէ ձեռք յափշտակեցին ոսկիի քաղաւորը,
հանդէսներ, սեղաններ, երեկոյթներ կազմակերպե-
ցին իրեն ի պատիւ . և իշխանապաշտ ընդունելու
թիւն մը ըրին նախկին ածպարային :

Այս առթիւ պատիւ միջնորդ մը պատմենք :
Բարիդ գտնուած ժամանակը երգչուհիի մը հետ
ծանօթացաւ որուն տրճակ մը Պուժէլսոնի բաժ-
նէթուղթեր ընծայ ըրաւ :

— Այս թուղթերը խնամքով պահեցէք, — ըսաւ
այդ հորիզոնական էակին — բիշ ատենէն ահագին
կերպով պիտի բարձրանայ աստուծոյ արժէքը և հա-
րուստ, շատ հարուստ պիտի ըլլայ : Բայց, յանուն
Աստուծոյ, մի՛ ըսէք թէ ատենք ես տուի ձեզի :

Բնականաբար, Եւրոպայի այդ բարեպաշտ ուղ-
ղիկը, իր բարեկամներուն ականջն ի վար փափա-
ցաւ Պառնաթօյի այդ խօսքերը, այնպէս որ քանի մը օ-
րէն ամբողջ Բարիդ գրեթէ գիտէր Պուժէլսոնի
թուղթերուն գաղտնիքը, լսողները անմիջապէս այդ
բաժնէթուղթերէն գնել սկսան : Պառնաթօյի ուղար-
ած ալ այս էր : Թուղթերը վրայ զրին, հետեւաբար և
Պառնաթօ ահագին գումարներ շահեցաւ :

Բարիդ գտնուած միջոցին էր որ շատ մը դրա-
մատէրներու հետ ընկերակցութիւններ կազմեց և
ոսկիի հանքերու մեծ գործեր ըրաւ Եւրոպայի մէջ :

Վերջերս Լոնտոնի մէջ, Հայտ Բարբի դէմ որ
անգլիական ոստանին ամենէն գեղեցիկ և ամենէն
հարուստ թաղն է, հրաշագեղ և փառաւոր պալատ
մը շինել տուաւ որուն համար մեծամեծ գումարներ
ծախսեց :

Նշանաւոր ձիեր ունէր որ շատ անգամ 'յաղ-
թանակներ տարած են Բարիդի և Լոնտոնի ձիա-
շուներուն մէջ :

Պառնաթօ այրի մը և երեք զաւակ կը թողու-
որոնք պիտի բաժնեն 400 միլիոն ֆրանքի հարըս-
տութիւն մը, որուն հիմը դրած են ինքը և էջը,
ընկերութիւն մը որուն եթէ երկու անդամներն ալ
մարդ ըլլային, թերեւս այս յաջողութիւնը չէին
ունենար :

ՀԱՍՐԱԳԷՏ ԱՐՔԱՅԱԶՈՒՆ ՄԸ

Անգլիական թերթերը պզտիկ սիրուն դէպք
մը կը պատեն որուն զիւրապն է Ալեքսանդր
Իշխանը, Պէտրի իշխանուհոյն որդին և Վիլ-
թորի թագուհոյն թոռը, որ հազիւ տասը տա-
րեկան կայ :

Անցեալները մայրը, փայլուն նոր ոսկի մը կու-
տայ տղուն, որ բնականաբար անմիջապէս կը վազէ
այդ բաժնի շրջանը ծախսել մանր մունր բաներ
գնելով և երբ վերջի բէնին ալ կանգնտանայ, անա-
մօթաբար կերթայ մօրմէն նորէն ոսկի մը ուզելու,
բայց Պէտրի իշխանուհին կը յանդիմանէ այդ պզտիկ
անառակը իր շուրջ բնաւորութեանը համար և
կը մերժէ մինչեւ իսկ բէնի մը տալ :

Տղան տեսնելով որ մօրմէն լաւ չկայ, որոշեց
իր մեծ մօր գրել և իր վիճակը հասկնելով խնդրել
որ վերջ մը տայ իր այս տխուր կացութեան :

Թագուհին շատ փութկոտութիւն չի ցուցուց
իր թոռան փափաքը լրացնելու — մօլութիւնը քա-
ջալերելու չէ — և նամակով մը մեծ բանակու-
թեամբ, . . խրատներ և յանդիմանութիւններ յրկեց
իրեն :

Երեք օր ետքը հետեւեալ պատասխանը կ'ստա-
նար փոքրիկ կենցաղասէրէն .

«Միւրեղի մեծ մայր
«Ստացայ Ձեր նամակը և հաւատացէք որ շատ
մը յանդիմանութիւններ ընդունած ըլլալուս չեմ
վշտացած . Ձեր տուած բարի խորհուրդները շատ
գործիս եկան :

«Ձեր նամակը չորս ու կէս ոսկիի ծախսեցի ձե-
ռագրերու սիրահարի մը » :

Հիանալի չէ՞ք գտներ դարավերջիկ այս իշխա-
նազունին գործնական հնարամտութիւնը :

Յ. ԵՒ Կ. ՄԱԹՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԳԱՀԻՐԷ ԵՒ ԱՂԵՔԱՆԴՐԻՍ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՌԵԹԻ
ՄԵԾԱԳՈՅՆ ԳՈՐԾԱՐԱՆ

ԸՆԳՈՒՄՈՒՄ ՄԵԾԱԳՈՅՆ «ՇԱՐԱ ԱԳԱՄ»
ԽԱՈՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՂԵՄ :

ԸՆԹԱՑԻԿ ԳԻՆ ՍԻԿԱՌԵԹՆԵՐՈՒ				
Սիկարէթ Ռուսեալ 1000 հատը 2 1/2 Անգ. ոսկի				
"	Խըտիվեալ	"	2	"
"	Պալատական	"	1 1/2	"
"	Պօհճա	"	1 1/4	"
"	Նաթիւրէլ	"	1	"
"	Փօռ	"	20	Փրանք

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ
ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՅԱՐԱՐ

Հայ եկեղեցւոյ դէմ բացած խանութին
մէջ ամենէն դժուարահաճները գոհայներու

եղանակաւ կ'արդուկէ շապիկներ և այլն սո-
վորական գիներով :

Ուղղներու համար լուացարարութեան
հիւշ մ'ալ աւելցուած է, ուր՝ յաճախորդ-
ներուն ճերմակեղէնները զատ զատ լուայու
գնահատելի դրութիւնը հաստատած է :

Ի դիւրութիւն յաճախորդաց ճերմակե-
ղէնները՝ ինք անձամբ պիտի առնէ տուներէն
և պիտի վերադարձնէ :

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ, ՈՅԺ, ԿՈՐՈՎ

ԴԱՐՄԱՆ ԱՆԱՐԻՒՆՈՒԹԵԱՆ, ՏԿԱՐՈՒԹԵԱՆ,
ԵՒ ԶՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

ԼԸ ՊԻՕԺԷՆ

Միակ սնունդ նորաբոյժ հիւանդներու համար,
կազմուիչ սրճի, ժնշտական գործարաններու, աւ-
եան եւ ջղային հիւանդութիւններու :

Կը լսեմնարարուի հեծեղանքի գործածողներուն :
Մեանցելի դեղ ոյժի պէտք ունեցողներուն համար :

ԿԸ ԳՏՆՈՒԻ ԱՄԵՆ ԴԵՂԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Մթերանոց. — Ա. ՄԱՆՏՈՅԻԱՒ ԱճԿՅՈ—
Եգիպտական դեղատարնը Էգպէֆիէ, Գահիրէ :

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔԱՆԴՐԻՍ ԳԻԺ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		խառն	ամիսայ.	կէս ուղ.	ամիսայ.	էքսորէս	ամիսայ.	էքսորէս	ամիսայիս	
		1,2,3,4գ.	1,2,3,4գ.	1,2,3,4գ.	1,2,3,4գ.	1, 2 կգ.	1,2,3,4գ.	1, 2 կգ.	1 2 3 կարգ	կարգ
Գահիրէ	մեկ.	առտ. 4 45	—	առտ. 7 —	առտ. 8 15	առտ. 9 30	երեկ. 3 30	երեկ. 4 45	երեկ. 7 15	երեկ. 11 —
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	առտ. 12 35
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	երեկոյ	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔԱՆԴՐԻՍԻ ԳԱՀԻՐԷ ԳԻԺ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		ամիսայ.	կէս ուղ.	ամիսայ.	էքսորէս	խառն	ամիսայ.	էքսորէս	ամիսայիս	
		1,2,3,4գ.	1,2,3,4գ.	1,2,3,4գ.	1 2 կգ.	առտ.	1,2,3,4գ.	1 2 կգ.	1 2 3 կարգ	կարգ
Աղեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	առտ. 9 20	երեկ. 2 30	երեկ. 4 15	երեկ. 6 15	երեկ. 11 —
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	առտ. 1 9
Թանթա	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՋ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՑ

ՍԻԻԷՋ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՅՈՑ	ԵՐԵԿՈՑ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՅՈՑ	ԵՐԵԿՈՑ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէզ (բարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա)	ժամ.	12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53		երեկոյ	1 20	7 5
Ջակադիկ)	ժամ.	1 34	8 54	Իսմաիլիա	»	—	—
	մեկ.	1 44	9 4		ժամ.	3 7	8 53
Իսմաիլիա	մեկ.	3 40	1 —	Ջակադիկ)	մեկ.	3 17	9 3
	ժամ.	—	5 —		Պէնհա)	ժամ.	4 13
Սիւէզ կայարան	ժամ.	—	5 —	մեկ.	4 17	9 4	—
Տօք (բարափ)	ժամ.	6 55	—	Գահիրէ	ժամ.	5 5	10 35

Le Gérant: HENRY SAKAKINI

Տպագրութիւն ՓԱՐՈՍ Լագրի